

ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
10-Ի ԹԻՎ 20, 21, 22-Ն, 23-Ա ԵՎ 24-Ա
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 21-Ա որոշման վերնագրի վերջում դրվել է կետադրական նշան: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավական ակտի վերնագրի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում:

Որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին կատարված հղումը սխալ է, քանի որ այն սահմանում է համայնքի ղեկավարի լիազորությունները ֆինանսների բնագավառում: Հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետին:

Որոշմամբ հաստատված հավելվածի «Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ» բաժնում «1251» տողից հետո ավելացնել նոր «1331 /Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ/» տող և «Տարեկան հաստատված պլան», «Տարեկան ճշտված պլան», «Փաստացի» և «Կատարման տոկոս» սյունակներում հապատասխանաբար լրացնել «680», «680», «86.0» և «12.6» թվերը: «Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ /գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսեր» բաժինների վերնագրերում նշված «(01.01.2019թ.-30.10.2019թ. ժամանակահատվածի համար)» թվերը փոխարինել «(01.01.2019թ.-30.09.2019թ. ժամանակահատվածի համար)» թվերով:

Թիվ 22-Ն որոշման նախաբանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին կատարված հղումը սխալ է: Հղումը կատարվել է ուժը կորցրած ճանաչված իրավական ակտին: Անհրաժեշտ է հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին:

Որոշման ծախսային մասում կատարված փոփոխությունները՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի ու դասերի անվանումներով ներկայացված չեն:

Թիվ 23-Ա որոշման նախաբանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին կատարված հղումը սխալ է, քանի որ այն սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ: Նշված կարգն արդեն իսկ սահմանվել է համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 16-ի թիվ 8-Ն որոշմամբ: Հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին:

Որոշումներում կիրառվել են կրճատ գրառված բառեր: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
31.10.2019թ.